
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բան. գիտ. թեկն., դոցենտ

Էլիասուցե՝ lilit_hovsepiyan@mail.ru

**ԵՐԳ ԵՐԳՈՑԻ «ԳԻՏԱՑԻ ԶԻ...» ՄԿՄՎԱԾՔՈՎ ՀԱՏՎԱԾԸ ԵՎ
ՎԱՐՂԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ամփոփում

Վարդան Արևելցու «Երգ երգոցի Մեկնության» մի քանի գրչագրեր ունեն «Երգ երգոցի» «Գիտացի զի մարմին...» սկզբածքով հատվածը՝ մեկնությամբ հանդերձ: «Երգ երգոցի» այս հատակտորը ունի *միայն* հայերեն Աստվածաշնչի կանոնը:

Հայագիտության մեջ այս հատվածի մեկնությունը համարվել է Վարդան Արևելցու «Երգ երգոցի Մեկնության» հետ կապ չունեցող առանձին ճառ (Փ. Այնթափյան, Հ. Քյոսեյան), որը նախատեսված էր Տոնապատճառ ժողովածուի մեջ զետեղելու նպատակով (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Հ^{մբ} 5862): Սակայն ձեռագրերի համեմատությամբ պարզվում է, որ զիտական շրջանառության մեջ դրված Մաշտոցի անվ. Մատենադարանի Հ^{մբ} 5862, 1121 և 3695 ձեռագրերից բացի խնդրո առարկա հյուսվածքն առկա է նաև Հ^{մբ} 4834, 5259, 1161, 5747, 3342 և Վենետիկի Մխիթարյան մատենադարանի Հ^{մբ} 1361, 1212 և 1368 ձեռագրերում:

Հոդվածը համեմատական քննության է ենթարկում Վարդան Արևելցու ոչ միայն Մեկնության առանձին գրչագրեր, այլ նաև «Գիտացի զի...» հատակտորի մասին եղած ակնարկները, նկարագրությունները: Համեմատության արդյունքում հաստատվում է, որ «Գիտացի զի...» հատվածի մեկնությունը Վարդան Արևելցու «Երգ երգոցի մեկնության» մաս է եղել ի սկզբանե, ավելի ուշ անջատվել է բուն Մեկնությունից և մուծվել Տոնապատճառ ժողովածուի մեջ՝ որպես ճառ: Բնագրի այդ վիճակն է արտացոլում Վենետիկի Մխիթարյան մատենադարանի 1278 թ. ընդօրինակված Հ^{մբ} 1361 ձեռագիրը, որն ապացուցում է, որ «Երգ երգոցի» «Գիտացի զի...» սկզբածքով Վարդան Արևելցու հեղինակած մեկնությունը ոչ թե առանձին ճառ է, այլ «Երգ երգոցի Մեկնության» մաս և քննական բնագիրը կազմելու ժամանակ պետք է Մեկնության հետ դիտարկվի որպես մեկ միավոր:

Բանալի բառեր և արտահայտություններ. «Երգ երգոց», մեկնություն, ճառ, քննական բնագիր, Տոնապատճառ ժողովածու, գրչագիր, ձեռագիր, Աստվածաշունչ, Վարդան Արևելցի, ընդօրինակություն:

Ներածություն

Աստվածաշնչի հայերեն քննական բնագրի բարդ աշխատանքի էական խնդիրն է պարզել սուրբգրային բնագրի պատմության տարբեր փուլերը: Այս առումով Աստվածաշնչի (այս դեպքում՝ Հին Կտակարանի «Երգ երգոց» գրքի) մեկնություններն անփոխարինելի են. ի տարբերություն Աստվածաշնչի բնագրի բազմաթիվ ընդօրինակությունների, որոնք ավելի շատ են փոփոխությունների ենթարկվել, մեկնությունների մեջ սուրբգրային քաղումները հիմնականում պահպանվել են իրենց նախնական վիճակով՝ առանց էական փոփոխությունների, և ուսումնասիրողի համար դառնում են Աստվածաշնչի բնագրի «պահապանները»:

Հայերեն Աստվածաշնչի Հին Կտակարանի «Երգ երգոցն» ունի «Գիտացի զի...»¹ սկսվածքով մի հավելում, որի մեկնողական ավանդույթը ծագում է Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի Մեկնությունից» և շարունակվում նաև նրան հաջորդած մեկնիչների մոտ: Վարդան Արևելցին նույնպես մեկնել է այս հատվածը, որը, սակայն, հայագետների կողմից դիտարկվել է որպես առանձին ճառ: Հետագա շրջանի մեկնիչները տեղյակ էին, որ քննվող հատակտորը *միայն* հայերեն սուրբգրային կանոնին բնորոշ մաս է, հաճախ տարակուսանքի մեջ են հայտնվել, սակայն ընդօրինակել են և մեկնել:

Այդ կարևոր բնագիրն է.

«1.* Գիտացի զի մարմին զբաւսացուցանէ զմանկութիւն, եւ բարձրացուցանէ զշտեմարանս: Թագաւոր մեր ի գահոյս մեր, իբրեւ զարմաւ ոսկեղէն զմոսալից լցցին տաշտք մեր:

2. Դարձցի թագաւորն անդրէն ի մանկութիւն: Սիրելին ի սենեակ իւր. որոյ երգցից զսէրն: Ես իսկ եմ ի սաղմոսարանին, երգեցի ց ընդ ընկերս իմ, երգեսցո լք եւ ուրախ լիցուք: Թագաւոր սիրելի, թէպէտ ծածկեցաք ի

¹ Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատության մեջ ունի «Էկլէսիատէս» խորագիրը. տե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԲ. հատոր, Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, Մեկնութիւն Երգոց երգոյն, Առաջաբանը և քննական բնագիրը՝ Լ. Հովսէփյանի, Ե., 2011, էջ 768-771:

տեպնեն, աչք մեր յսնաւորք: Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ յարգանդէ. զեղեցի կո ի կանայս. մա յր քո ծնցի մարմին անխեղճ»²:

Այս բնագրի կապը Վարդան Արևելցու Մեկնության հետ բացահայտում է «Երգ երգոցի» բնագրի պատմության հետ կապված կարևոր հարցեր, թույլ տալիս վերականգնել Վարդան Արևելցու հեղինակած Մեկնության բնագրի նախնական, անաղարտ պատկերը:

Մեթոդաբանությունը

Վարդան Արևելցու «Երգ երգոցի» մեկնողական հատվածներն ունսումնասիրելու համար կիրառել ենք վերլուծական, քննական, համեմատական, համադրական մեթոդներ:

Վարդան Արևելցու «Երգ երգոցի Մեկնությունը»³ պահպանվել է 50-ից ավելի գրչագիր օրինակներով: Այս երկի հեղինակային պատկանելությունը կասկած չի հարուցել, սակայն ձեռագրերի համեմատության ընթացքում պարզվեց որոշ օրինակներ տարբերվում են բնագրային առանձնահատկություններով և կարող են կազմել առանձին խումբ: Դրանք այն գրչագրերն են, որոնք բուն մեկնությունից հետո ունեն «Երգ երգոցի» «Գիտացի, զի մանկութիւն...» հավելվածի (այսուհետև՝ «Գիտացի զի...») երկմասն մեկնություն:

Կարծում ենք՝ միջնադարի հայ մատենագրության մեջ շրջանառված սույն հոդվածի նյութ՝ «Գիտացի զի...» հատվածը և նրա մեկնությունները որոշակի կարևորություն ունեն, որովհետև բնորոշ են *միայն* հայկական միջավայրին, գրական շրջանառության մեջ մտել են հայ մեկնիչների կողմից և թույլ են տալիս ուրվագծել «Երգ երգոցի» բնագրի պատմության օղակները:

² ՄՄ ձեռ. Հ^փ 5259, էջ 80ա: Այս հատվածի մանրամասն քննությունը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Հ^փ 30, Երևան, 2020. – Լ. Հովսեփյան, «Երգ երգոցը» և Գրիգոր Նարեկացին», էջ 102:

* Համարակալումը մերն է և արված է ըստ Վարդան Արևելցու գլխաբաժանման:

³ Հայտնի է հետևյալ խորագրերով. «Հաւաքումն ի մեկնչացն Վարդան վարդապետին Երգ Երգոցին» - Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. Հ^փ 5452, էջ 1ա, «Պարզութիւն յԵրգս Երգոյն» - ՄՄ ձեռ. Հ^փ 4834, էջ 1ա, «Հոգիապայծառ Սուրբ հարն, լուսաւոր Վարդան վարդապետի արարեալ համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցն՝ պարզ եւ դիւրահաս ի խնդրոյ վարդապետի Կիւրակոսի» - ՄՄ ձեռ. Հ^փ 5259, էջ 6ա, Հ^փ 2603, էջ 295ա, Հ^փ 3213, էջ 1ա, «Վարդանայ վարդապետի արարեալ վասն Երգ երգոյն Սողոմոնի մեկնութեան» - ՄՄ ձեռ. Հ^փ 1156, էջ 143ա, Հ^փ 8215, էջ 1ա:

Առաջին հատվածի մեկնությունը (բնագրի մեջ՝ 1) «Եռամեծի սրբոյ) Վարդապետին Վարդանայ(յ) արարեալ ի Բան Սողոմոնի» վերնագրով՝ որպէս Արևելցու մի ճառ գիտական շրջանառության մեջ դրել է Փ. Անթապայանը⁴: Հետագայում նրա հետևողականությամբ Հ. Քյոսեյանն այս հատվածը հրատարակել է որպէս Վարդան Արևելու նորահայտ ճառ⁵:

Փ. Անթապայանը պարզել է, որ Վարդան Արևելցու ճառերը զետեղված են այն ձեռագրերում, որոնք նրա «վերակազմած «Տոնապատճառ»-ն են, կա՛մ էլ այլ նյութերի թվում ունեն նաև սույն «Տոնապատճառ»-ը⁶ (այս տարբերակը կամ խմբագրությունը-Փ.Ա.)⁷: Նա եզրակացրել է, թե այս ճառը պարունակող ձեռագրերը (ՄՄ Հ^{մբ} 5862, 1121 և 3695⁸ - Փ. Ա.) «բոլոր պահանջված օրինաչափություններով և տվյալներով համապատասխան չեն մեր կողմից... նշված ձեռագրական խմբին, բայց հեռու էլ չեն նրանից»⁹:

«Երգ երգոցի» Վարդան Արևելցու Մեկնության ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ հիշյալ երեք ձեռագրից բացի, խնդրո առարկա հյուսվածքն առկա է նաև ՄՄ Հ^{մբ} 4834, 5259, 1161, 5747, 3342 և Վենետիկի Հ^{մբ} 1361, 1212, 1368 ձեռագրերում¹⁰: Ի սկզբանե նկատենք, որ այս ձեռագրերից Տոնապատճառ են միայն երկուսը՝ ՄՄ Հ^{մբ} 5862 և Վենետիկի Հ^{մբ} 1212, մնացած ձեռագրերում մեզ հետաքրքրող շարադրանքը ներկայանում է որպէս ***Վարդան Արևելցու «Երգ երգոցի Մեկնության» շարունակություն:***

Հարց է ծագում. այս երկը Վարդան Արևելցու մեկնության մասն է եղել, թե հեղինակն այն հորինել է որպէս առանձին ճառ (այլ ճառերի նման)՝ իր իսկ խմբագրած Տոնապատճառում զետեղելու նպատակով: Մեր կարծիքով հարցը կարելի է քննել երկու տեսանկյունից. առաջին՝ «Երգ

⁴ Փ. Անթապայան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա., Երևան, 1987, էջ 189 (այսուհետև՝ Փ. Անթապայան, Ա.):

⁵ Վարդան Արևելցի, Ճառք և ներբողեանք, Աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Երևան, 2000, էջ 113-121:

⁶ Նկատի ունի ՄՄ Հ^{մբ} 4139 (1267 թ.) Վարդան Արևելցու խմբագրած և նրա աշակերտ՝ Տիրացուի կողմից գրված ձեռագիրը: Այս մասին խոսք կլինի համապատասխան տեղում:

⁷ Փ. Անթապայան, Ա., էջ 182:

⁸ Այս համարը տպագրական վրիպակ է. 3695-ը պետք է կարդալ 3697:

⁹ Փ. Անթապայան, Ա., էջ 189:

¹⁰ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, հ. Է, Յօրինեց Հ. Ս. վ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 696, 664, 719-720 (այսուհետև՝ Ցուցակ Վենետիկի, Է.):

երգոցի» մեկնության հայ գրականության ավանդույթի, երկրորդ՝ Տոնապատճառի խմբագրման և գրության հանգամանքների:

«Երգ երգոցի» մեզ հայտնի առաջին ինքնուրույն հայերեն մեկնությունը Գրիգոր Նարեկացունն է: Նա մեկնել է խնդրո առարկա հատվածն ու «Եկլեսիատես» ենթավերնագրով զետեղել բուն մեկնությունից առաջ¹¹: Գրիգոր Նարեկացու Մեկնության հետքերով հնարավոր եղավ պարզել, որ «Գիտացի զի...» հատվածը «Եկլեսիատես» խորագրով և նույն կարգով առկա է միայն Երուսաղեմի Սուրբ Հակոբյան մատենադարանում պահվող Երզնկայի Աստվածաշնչի մեջ (Հ^մ 1925, 1269 թ., Երզնկա)¹²: «Երգ Երգոցի» Գրիգոր Տաթևացու Մեկնության հիմնական աղբյուրը Վարդան Արևելցու երկն է. նա նույնպես նույն հավելվածի մեկնությունը «Եկլեսիատես» խորագրով զետեղել է իր գործի վերջում¹³:

Աբրահամ Կոստանդնուպոլսեցին իր «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի» աշխատության մեջ հավելվածի մասին գրել է. «Այլ թէ երբ կամ յումմէ եղեւ գտեալ, մեզ չէ յայտ: Եւ թէպէտ քաջ գիտեմք, զի Աստուածաշունչ մեր յընտիր օրինակէ յունաց յեղեալ եղեւ ի հայ թարգմանութիւն, տեսեալ են արդեալք զայս սուրբ թարգմանիչք մեր, ոչ գիտեմք»¹⁴:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Վարդան Արևելցուց առաջ և հետո մեկնիչներին ո՛չ միայն հայտնի էր «Գիտացի զի...» հատվածը, այլև նրա նկատմամբ ձևավորված էր որոշակի ավանդույթ: Այն հանգամանքը, որ և՛ Նարեկացին, և՛ Տաթևացին «Երգ երգոցի» հավելվածն առանձնացրել են բուն մեկնությունից, արդեն խոսում է այն մասին, որ այն համարվում էր «Երգ երգոցից» առանձին մաս՝ հավելում: Անշուշտ, քննության ենթակա է նաև այս հյուսվածքը բուն մեկնությունից զատելու պատճառը. չի բացառվում, որ սա ակնարկում է կանոնից առկա շեղումները: Հավելվածի վերաբերեալ ուշագրավ դիտարկում ունի Վարդան Արևելցին. «...իսկ

¹¹ Ծնթ. 1:

¹² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հատոր վեցերորդ, Կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1972, էջ 401-416:

¹³ «Համառօտ հաւաքումն ի տեսութիւն լուծմանց Երգոյ երգոյն, աշխատասիրեալ Գրիգորիոս հսկողի, արի եւ երջանիկ հոետորի եւ քաջ փիլիսոփայի հայոց, աշակերտի եռամեծին Յոհաննու Ռոտոնեցոյ, ի լուսաւոր բանիցն վարդապետին Վարդանայ» (ընդգծումը մերն է- Լ. Հ.) - ՄՄ ձեռ. Հ^մ 1200, էջ 368ա-402ա (էջ 399բ-402ա «Եկլեսիատես»):

¹⁴ ՄՄ ձեռ. Հ^մ 5788, էջ 635:

Միրեցեքն գլուխ¹⁵ կասկածանաւք՝ եթէ իցէ՛ նորա, եթէ ո՛չ. բայց բանքս այս (իմա՛ «Գիտացի գի...» - Լ. Հ.), որ հանեալ եղև ի սեղան հանդիսաւոր սրտից ձերոց, թէպէտ և ոչ երեւի ի բնագիրսն Սաղովմոնի, սակայն առանց կարծեաց և հարազատ Սաղովմոնի է. և յԵրգս երգոյն կոչելոյ. նախ ի նկարագրէն իմանալ, զի կարի նման է, և ապա՝ ի յարանց սրբոց, որք առեալ են ի վկայութիւն՝ աբբա Եփրեմ և Յակոբ Սրճեցին, և պատրիարզն Ասորոց Միխայէլն. և յերկուս և յերիս վկայից հաստատեսցի ամենայն բան, ուստի յայտ է, թէ յայլմէ յումեքէ պահեցաւ և այս յազդմանէ Հոգւոյն՝ ի խնդութիւն հարսինն եկեղեցւոյ և ի նիւթ աստուածաբանութեան և ի դաստիարակութիւն վարժից կրթութեան ուսումնասեր մտաց...»¹⁶:

Առավել քան հստակ է. Վարդան Արևելցին այս հավելվածը Սողոմոնինն է համարում նախ ըստ «նկարագրի»՝ ոճի, «զի կարի նման է», ապա հիմք է ընդունում իրեն նախորդած հեղինակների՝ Եփրեմի, Հակոբ Սրճեցու եւ Միքայել Ասորու՝ այս երկից արված վկայակոչումները: Ավելին՝ նա քաջ ծանոթ էր այս հատվածի մեկնողական ավանդույթին, քանի որ իր երկում բառացի քաղումներ ունի թէ՛ Գրիգոր Նարեկացուց և թէ՛ այլ մեկնիչներից¹⁷:

Այժմ անդրադառնանք Վարդան Արևելցու կողմից խմբագրված և նոր ճառերով «հարստացված» Տոնապատճառին: Փ. Անթապայանը պնդում է, որ Արևելցու «կազմած «Տոնապատճառ»-ը առավել հարազատությամբ պահպանվել է... Հ^{4ր} 4139 ձեռագրում: ...Տիրացու գրիչը, ըստ երևույթին, այդ հիշատակարանը (ուստի և՛ ձեռագիրը Հ^{4ր} 4139 - Փ. Ա.) գրել է 1270-ական թվականներին, և գուցե, ՉԻԶ. (1277-Փ. Ա.) գրելու փոխարեն ՉԺԶ. (1267 - Փ. Ա.) է գրել»¹⁸:

Եթե ընդունենք, որ Արևելցու աշակերտ Տիրացուն իր ուսուցչի խմբագրած և վերակազմած Տոնապատճառն ընդօրինակել է ամենաուշը 1277 թ.՝ ուսուցչի մահվանից 6 տարի հետո, ապա այստեղ պետք է

¹⁵ Կկատի ունի Սողոմոնի Իմաստութիւնը. Մխիթար Այրիվանեցու ցանկերում ևս (նաև այլ մատենագիրների գործերում) այս գիրքը հիշատակվում է իր սկսվածքային «Միրեցեք» բառով. տե՛ս Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի, Ե., 1985, էջ 212:

¹⁶ ՄՄ ձեռ. Հ^{4ր} 5259, էջ 82աբ (ընդգծումը մերն է). հմմտ. Վ. Արևելցի, Ճառք և ներբողեանք, էջ 114-115:

¹⁷ «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2003. - Լ. Հովսեփյան, «Վարդան Արևելցու «Երգ երգոցի մեկնության» առանձնահատկությունները», էջ 17-25:

¹⁸ Փ. Անթապայան, Ա., էջ 244. նույնի «Տոնապատճառ ժողովածուն», - Բանբեր Մատենադարանի, էջ 103-127. Ռ. Հ. Վարդանյան, Հայոց Տոնացույցը (4-18-րդ դար), Ե., 1999, էջ 225-226:

զետեղված լինելը նաև խնդրո առարկա հյուսվածքը, եթե Վարդան Արևելցին այն գրել էր իսկապես ուրպես Տոնապատճառի մաս. սակայն Տիրացուի օրինակության մեջ այն չկա:

Ձեռագրերի համեմատությամբ պարզվում է, որ Վարդան Արևելցու մեկնության ՄՄ հնագույն՝ չ¹⁹ 5452 (1265 թ.) օրինակը վերջից թերի է, ուստի և մեզ հետաքրքրող հարցին պատասխանել չի կարող: Մնում է Վենետիկի չ¹⁹ 1361 ձեռագիրը, որն ընդօրինակված է 1278 թ.-ին և որտեղ մեզ հետաքրքրող հատվածը զետեղված է Վարդան **Արևելցու «Երգ երգոցի Մեկնության վերջում»՝ որպես հավելված**¹⁹: Եթե ստույգ է, որ չ¹⁹ 4139 ձեռագիրը Վարդան Արևելցու խմբագրած և վերակազմած Տոնապատճառի մեզ հայտնի հնագույն և հարազատ ընդօրինակությունն է, ապա պետք է ենթադրել, որ մեկնության հավելվածային հատվածը ավելի ուշ, հավանաբար մոտ 1290-ական թվականներին է մտել Տոնապատճառ²⁰:

Վերջում ավելացնենք, որ Երգ երգոցի հավելվածի մեկնությունը որպես Վարդան Արևելցու մեկնության մաս ճանաչել են Գրիգոր Տաթևացին²¹ և Նոր Հայկազյան կազմող-բառարանագիրները²²:

Եզրակացություն

Այսպիսով՝

- «Երգ երգոցի» հավելված՝ «Գիտացի զի...» հավելվածի Վարդան Արևելցու Մեկնությունը պահպանված է ոչ միայն Տոնապատճառների, այլև «Երգ երգոցի Մեկնության» մի քանի գրչագրերում, որոնցից հնագույնն ու ամբողջականը Վենետիկի մատենադարանի 1278 թ. ընդօրինակված չ¹⁹ 1361 օրինակն է:
- Վարդան Արևելցու խմբագրած, վերակազմած և նրա աշակերտ Տիրացուի ձեռքով ամենաուշը 1277 թ. ընդօրինակված Տոնապատճառը «Գիտացի զի...» հատվածի Վարդան Արևելցու Մեկնությունը չունի, ինչը

¹⁹ Ցավոք, այս ձեռագրը մենք չենք տեսել և ստիպված ենք բավարարվել նկարագրությամբ. Յուզակ Վենետիկի, հ. է, էջ 696: Տե՛ս նաև Մ. Մաղաթ-Թեոփիլեանց, Վարք երեւելի արանց, հ. Բ., Վենետիկ, 1839, էջ 581:

²⁰ ՄՄ ձեռ. չ¹⁹ 5862, էջ 167բ-173ա:

²¹ Նույն տեղում, էջ 399ա-402բ:

²² Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Երևան, 1981, էջ 666. «Պրակագեղ» բառի բացատրության համար բառարանագիրները բերել են մի հատված «Գիտացի, զի...» հատվածի Վարդան Արևելցու մեկնությունից որպես աղբյուր նշելով Վարդան Արևելցու Մեկնությունը. «Պարարտութիւնք դաշտաց՝ տնկարար և ծաղկածին, և բոյսարձակ պրակագեղ և ցորենաբեր. **Վրդն. Երգ**», հմմտ. ՄՄ ձեռ. չ¹⁹ 5259, էջ 88ա:

թույլ է տալիս պնդել, որ այն ավելի ուշ՝ հեղինակի մահվանից հետո է մուծվել²³ Տոնապատճառի մեջ:

• Վարդան Արևելցու «Երգ երգոցի մեկնության» բնագիրը կազմելիս պետք է այս բնագրի անբաժանելի մասն համարել «Գիտացի զի...» հատվածի մեկնությունը. այդ մեկնությունն առանձին գործ, առավել ևս՝ ճառ համարելը սխալ է, որովհետև բովանդակությամբ և ժանրային հատկանիշներով ճիշտ մեկնություն է, միաժամանակ՝ ճառ գրատեսակի հետ բացարձակապես կապ չունի:

Օգտագործված գրականություն Ձեռագիր սկզբնաղբյուրներ

Մաշտոցի անվան Մատենադարան

1. Ձեռ. Հ^մր 5259:
2. Ձեռ. Հ^մր 5452:
3. Ձեռ. Հ^մր 4834:
4. Ձեռ. Հ^մր 4139:
5. Ձեռ. Հ^մր 2603:
6. Ձեռ. Հ^մր 3213:
7. Ձեռ. Հ^մր 1156:
8. Ձեռ. Հ^մր 8215:
9. Ձեռ. Հ^մր 5788:
10. Ձեռ. Հ^մր 1200:

Տպագիր սկզբնաղբյուրներ

11. Անթապյան Փ., Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, զիրք Ա., ՀՄՍՀ ԳԱ հրատ. , Ե., 1987:
12. «Բանբեր Մատենադարանի», հ. 10, ՀՄՍՀ ԳԱ հրատ. , Երևան, 1971:
13. «Բանբեր Մատենադարանի», հ. 30, Ե., 2020:
14. «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ. , Ե., 2003:

²³ Փ. Անթապյանը չի բացառում մեկնություններից առանձին հատվածների քաղումները Տոնապատճառի մեջ. տե՛ս Փ. Անթապյան, «Տոնապատճառ» ժողովածուն», - «Բանբեր Մատենադարանի», հ. 10, Ե., 1971, էջ 103:

15. Մաղաք-Թեովիլեանց Ս. , Վարք երեւելի արանց, հ. Բ., Վենետիկ, Ս. Ղազար, 1839:
16. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սատենադարանին Մխիթարեանց, հ. Է, Յօրինեց Ճեմճեմեան Հ. Ս. վ. , Վենետիկ, Ս. Ղազար, 1996:
17. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հատոր վեցերորդ, Կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, տպ. Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1972:
18. Սատենագիրք Հայոց, ԺԲ. հատոր, Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, «Նաիրի» հրատ., 2011:
19. Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, [Գաբրիէ Աւետիբեան](#), [Խաչատուր Միրումէան](#), [Մկրտիչ Աւգերեան](#), ԵՊՀ հրատ. , Ե., 1981:
20. Վարդան Արևելցի, Ճառք և ներբողեանք, Աշխատասիրութեամբ Հակոբ Քյոսեյանի, «Ոսկան Երևանցի» հրատ. , Ե., 2000:
21. Վարդանյան Ռ. Հ. , Հայոց Տոնացույցը (4-18-րդ դար), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. , Ե., 1999:

Лилит Овсебян

Отрывок с началом «Я знаю, что...» «Песнь песней» и Толкование

Вардана Аревелци

Заключение

Ключевые слова и выражения: «Песнь Песней», толкования, речения, критический оригинальный текст, сборник Тонапатчар (комментарии на лекционные или причины праздников), рукопись, Библия, Вардан Аревелци, копия.

В нескольких рукописях «Толкование Песни Песней» Вардана Аревелци вместе с его авторскими толкованиями представлен отрывок с началом «Я знаю, что...» «Песнь Песней». Этот отрывок из «Песни Песней» имеет только армянский канон Библии.

Толкование этого отрывка в арменоведении считается отдельным речением, не имеющей отношения к «Толкованию Песни Песней» Вардана Аревелци (П. Антабян, А. Кёсеян), предназначенной для помещения в сборник «Тонапатчар» (рук. № 5862 Матенадарана имени Маштоца). Однако при сравнении рукописей становится ясно, что, кроме рук. №№ 5862, 1121 и 3695 введенные в научный оборот, рассматриваемая композиция присутствует

и в рук. №№ 4834, 5259, 1161, 5747, 3342 и рук. №№ 1361, 1212, 1368 Мхитаристской библиотеки Венеции.

В статье сравнительному рассмотрению подвергаются не только отдельные рукописи Толкования Вардана Аревелци, но и аллюзии, описания на отрывок «Я знаю, что...». В результате сопоставления подтверждается, что толкование отрывка «Я знаю, что...» изначально входило в состав «Толкования Песни Песней» Вардана Аревелци, но в последствии отделилось от самого Толкования и вошло в сборник «Тонапатчар» как речение. Такое состояние исходного текста отраженного в скопированной рукописи 1278 г. № 1361 Мхитаристской библиотеки Венеции, доказывает авторство проповеди с началом «Я знаю, что...» «Песни Песней» Вардана Аревелци и не является отдельным речением, а представляется частью «Толкований Песни Песней», которые при составлении оригинального критического текста следует рассматривать как единое целое с Толкованием.

Lilit Hovsepian

**The excerpt with the beginning “I know that...” of “Song of Songs”
and the Commentary of Vardan Areveltsi**

Conclusion

Key words and expressions: “Song of Songs”, commentary, homily, critical original text, “Tonapatchar” collection (Commentaries on Lectionaries or The Reasons of Feast days), manuscript, Bible, Vardan Areveltsi, copy.

A few of the manuscripts “Commentary of Song of Songs” by Vardan Areveltsi, along with their commentaries present the excerpt with the beginning “I know that...” of “Song of Songs”. This excerpt of “Song of Songs” retains *only* the canon of the Bible in Armenian.

The commentary of this excerpt in Armenology has been considered as an individual homily which has no relation to the “Commentary of Song of Songs” by Vardan Areveltsi (P. Antabian, H. Kyoseyan) intended to be placed in the “Tonapatchar” collection (Mashtots Matenadaran, Ms. № 5862). However, through the comparison of manuscripts it becomes clear that besides the Mss. №№ 5862, 1121 and 3695 already put into scientific circulation, the composition under consideration is also present in the Mss. №№ 4834, 5259, 1161, 5747, 3342 and the Mss. №№ 1361, 1212, 1368 of the Mekhitarist Library of Venice.

The article subjects to a comparative examination not only individual manuscripts of the Commentary by Vardan Areveltsi, but also allusions,

descriptions on the excerpt “I know that...”. As a result of the comparison, it is confirmed that the interpretation of the passage “I know that...” was originally part of the “Commentary of Song of Songs” by Vardan Areveltsi, consequently it was separated from the proper Commentary and was included in the “Tonapatchar” collection as a homily. This condition of the original text is reflected in the 1278 copied manuscript № 1361 of the Mekhitarist Library of Venice which proves that the commentary with the beginning “I know that...” of “Song of Songs” authored by Vardan Areveltsi is not an individual homily, but part of the “Commentary of Song of Songs” and should be considered as one unit with the Commentary when compiling the original critical text.

Խմբագրություն է ուղարկվել 01.04.2023թ

Հանձնարարվել է գրախոսության 14.04.2023թ.

Հրատարակման է հանձնարարվել 28.04.2023թ.